են խորհն յարգանքով և նրանցից որևէ ոստ կամ ճիւղ կտրելը շատ ծանր մեղք են համարում իրենց համար։ Ինձ այնպէս է թւում, որ Ուտիացոց աշխարհի այժմեան ազգաբնակութեան նախնիքները՝ իբրև Աստուած պաշտելիս են եղել ի միջի այլոց՝ նաև հաստատմատ և դարաւոր ծառերը։ Տողերիս գրողի հայրական այգում կայ շատ հին դարերից բուսած շագանակի մի ահագին ծառ, որի հաստութիւնը երեք տղամարդի գրկաչափից աւելի է։ Աւանդաբար պատմում են, որ այդ հսկայ ծառի բուսած տեղում անհաւատ լեռնականները չարչարել են ս. Եղիշէ Առաքեալի աշակերտներից մէկին, ուր՝ միևնոյն տեղում, իբրև նշան տնկել են շագանակի մի ծառ, որի առատ պտուղներից մի հատ քաղել ոչ ոք չի համարձակւում, վասնզի նրան սուրբ և անձեռնմխելի է համարում տեղական ժողովուրդը։ Այդ հսկայ ծառի տակը երբեմն ուխտ էին գալիս իմ մանկութեանս ատեն, խունկ ու մոմ էին վառում և մատաղ էին անում։ Մինչև ցարդ այդ վիթխարի ծառի ահագին քանակութեամբ պտուղները ագռաւներն ու կաչաղակներն են ուտում։ Անծանօթ այցելուն, այս ու այն հայոց և թրքաբնակ գիւղերի մօտ, եթէ թաւոտ ու հաստատմատ անտառակներ տեսնի, անկասկած պիտի իմանայ, որ դրանք գիւղական գերեզմանատներն է, որոնց գեղեցիկ ծառերը սուրբ են համարւում ժողովրդի աչքում։ Նիժ գիւղի հիւսիսային կողմը, Նուխու ճանապարհի վրայ, հսկայ ծառերով պատած մի խիտ անտառ կայ, որ հին հեթանո-